

**ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ
ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ**

**ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ
ՄԱՏՐԻՑԱՅՈՎ ԱՌԱՋԻՆ ՓՈԽԼՈՒՄ ԳՏՆՎՈՂ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

**Ընկերության պաշտոնական դիրքորոշումը Կորպորատիվ կառավարման
համակարգի բնութագրական փուլի վերաբերյալ**

«Յու Այ Թի Ի Էքսպո» ՍՊԸ-ի կորպորատիվ կառավարման պրակտիկան ներկայումս համապատասխանում է Կորպորատիվ կառավարման կանոնագրքի I փուլին: Նշված փուլի ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ Ընկերության Տնօրենների խորհուրդը ձևավորվել է, և ՀՀ կորպորատիվ կառավարման կանոնագրքին միանալու պաշտոնական որոշումն ընդունվել է միայն 2025 թվականի դեկտեմբերին: Հետևաբար, Ընկերության կորպորատիվ կառավարման նոր համակարգը և դրանից բխող համապատասխան ներքին վերահսկողական մեխանիզմները գտնվում են ներդրման և ինստիտուցիոնալացման սկզբնական շրջանում, ինչն օբյեկտիվորեն պահանջում է անցումային ժամանակահատված՝ Կանոնագրքի սկզբունքներն ամբողջ ծավալով տեղայնացնելու և կիրարկելու համար:

Գլուխ I. Մասնակիցների հիմնական իրավունքներ, հավասար վերաբերմունք մասնակիցների նկատմամբ և նշանակալից մասնակիցների պարտականություններ

ՍԿԶԲՈՒՆՔ I.1. Կազմակերպության կառավարմանը մասնակցելու մասնակցի իրավունքը

Կազմակերպությունը պարտավոր է ապահովել հավասար և արդարացի վերաբերմունք նույն տեսակի (դասի) բոլոր բաժնեդուրմների սեփականատերերի նկատմամբ՝ նրանց կողմից կազմակերպության կառավարմանը մասնակցելու ու քվեարկելու իրենց իրավունքներն արդյունավետ իրականացնելու, ժողովի օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ հիմնավորված դիրքորոշում ձևավորելու և փեղեկացված որոշում կայացնելու համար:

Հայտարարագրում

	Դրույթ	Համապատասխանության կարգավիճակը			Բացատրություն
I.1.1.	Մասնակիցն ընդհանուր ժողովի գումարման օրվանից առնվազն 21 օր առաջ պատշաճ ծանուցվում է ընդհանուր ժողովի անցկացման ամսաթվի, վայրի, ձևաչափի և օրակարգի մասին, ինչպես նաև հնարավորություն է ունենում ծանոթանալ ընդհանուր ժողովում քննարկվելիք որոշումների նախագծերին, փաստաթղթերին և անհրաժեշտ այլ տեղեկատվությանը:		Համապատասխանում է մասամբ		Ընդհանուր ժողովի գումարումն իրականացվում է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան, ինչպես նաև Կորպորատիվ կառավարման կանոնագրքի պահանջներին համապատասխան:
I.1.2.	Ընդհանուր ժողովի հրավիրման վայրն ու օրը (ժամը) չեն սահմանափակում ընդհանուր ժողովին մասնակցի մասնակցությունը:	Համապատասխանում է			Ընկերությունն ունի մեկ միակ մասնակից՝ ի դեմս հասարակական կազմակերպության, որի որոշումները կարող են կայացվել ճկուն ժամանակացույցով և ձևաչափով: Հետևաբար, ժողովի հրավիրման վայրն ու օրը որևէ կերպ չեն սահմանափակում մասնակցության հնարավորությունը:

I.1.3.	Ընդհանուր ժողովի վարման կանոններն ու ընթացակարգերը հավասար վերաբերմունք են ապահովում միևնույն տեսակի (դասի) բաժնետոմսերի սեփականատերերի նկատմամբ:	Հ ա մ ա պ ա տ ա ս խ ա ն ու մ է			Ընկերության միակ մասնակիցը ԱՏՁՄ ՀԿ-ն է՝ 100% մասնակցությամբ: Հետևաբար տարբեր նույն դասի մասնակիցների նկատմամբ անհավասար վերաբերմունքի ռիսկ փաստացի չկա:
I.1.4.	Ընդհանուր ժողովի վարման կանոններն ապահովում են ընդհանուր ժողովում ձայների պատշաճ հաշվարկն ու հաշվառումը, ինչպես նաև քվեարկության արդյունքների ժամանակին հրապարակումը:		Համապատասխանում է մասամբ		09.12.2025 և 26.12.2025 արձանագրություններում/որոշումներում քվեարկության արդյունքները հստակ հաշվառված են: Հանրային/ժամանակին հրապարակման ընթացակարգը տրամադրված փաստաթղթերով չի հաստատվում:
I.1.5.	Ընդհանուր ժողովի վարման կանոնները և ընթացակարգերը հրապարակվում են կազմակերպության համացանցային էջում:	Հ ա մ ա պ ա տ ա ս խ ա ն ու մ է			Կազմակերպության համացանցային էջում հրապարակված են Ընկերության և նրա միակ մասնակից ՀԿ-ի կանոնադրությունները, որոնցում ամրագրված են ընդհանուր ժողովի վարման հիմնական կանոնները և ընթացակարգերը:
I.1.6.	Անկախ քվեարկության կարգից՝ մասնակիցների ձայներին տրվում է հավասար նշանակություն:	Հ ա մ ա պ ա տ ա ս խ ա ն ու մ է			Համաձայն կանոնադրության, Ընկերությունն ունի մեկ մասնակից՝ 100% մասնակցությամբ: Քվեարկության վերաբերյալ ներկայացված արձանագրություններում որոշումները և ձայների արդյունքները հստակ հաշվառված են:

I.1.7.	Ընդհանուր ժողովում մասնակիցը հնարավորություն ունի հարցեր տալ խորհրդի և գործադիր մարմնի անդամներին, աուդիտորին և ստանալ պատասխան, այդ թվում՝ գրավոր ձևով:	Հ ա մ ա պ ա տ ա ս խ ա ն ու մ է			Ընկերության միակ մասնակիցն իրավունք ունի ցանկացած ժամանակ ամբողջական տեղեկատվություն ստանալ գործունեության վերաբերյալ և ծանոթանալ հաշվառման փաստաթղթերին: Գործադիր մարմինը հաշվետու է ընդհանուր ժողովին և պարտավոր է պարզաբանումներ տրամադրել ու պատասխանել բարձրացված հարցերին:
I.1.8.	Ընդհանուր ժողովի ընթացքում մասնակիցները հնարավորություն ունեն հաղորդակցվելու միմյանց հետ՝ քվեարկության դրված հարցի վերաբերյալ որոշում կայացնելու կամ հարցի էությունը պարզաբանելու համար:	Հ ա մ ա պ ա տ ա ս խ ա ն ու մ է			Միակ մասնակից հանդիսացող ՀԿ-ի ներքին կառավարման շրջանակներում որոշում կայացնողների միջև հաղորդակցությունը լիարժեք ապահովված է:
I.1.9.	Կազմակերպությունը հավասարակշռում է համատեղ ներկայությամբ և հեռավար ժողովների գումարումը:	Հ ա մ ա պ ա տ ա ս խ ա ն ու մ է			Ընկերության միակ մասնակից հանդիսացող հասարակական կազմակերպությունն իր նիստերն ու որոշումների կայացման ժողովներն անցկացնում է ինչպես ֆիզիկական ներկայությամբ, այնպես էլ հեռավար եղանակներով՝ ապահովելով հաղորդակցման ձևաչափերի անհրաժեշտ ճկունությունն ու հավասարակշռությունը:

ՍԿԶԲՈՒՆՔ 1.2. Կազմակերպության խորհրդի անդամների թեկնածուների առաջադրման մասնակցի իրավունքը

Կազմակերպության կորպորատիվ կառավարման համակարգը պետք է խթանի մասնակցի արդյունավետ մասնակցությունը խորհրդի անդամների թեկնածուների առաջադրման և խորհրդի անդամների ընտրության գործընթացին:

Հայտարարագրում

	Դրույթ	Համապատասխանության կարգավիճակը			Բացատրություն
1.2.1.	Մասնակիցը ողջամիտ ժամկետներում ամբողջական և բավարար տեղեկատվություն է ստանում խորհրդի անդամների թեկնածուների մասնագիտական որակավորման և փորձառության, անցյալում և ներկայում զբաղեցրած պաշտոնների, կազմակերպության և դրա հետ փոխկապակցված անձի (անձանց) նշանակալից մասնակից լինելու մասին:	Հ ա մ ա պ ա տ ա ս խ ա ն ո ւ մ է			09.12.2025 թ. ընդհանուր ժողովը հաստատել է խորհրդի երեք անդամների կազմը: Թեկնածուների վերաբերյալ պահանջվող ամբողջական տեղեկատվության հիման վրա կայացնելով որոշումը:

ՍԿԶԲՈՒՆՔ 1.3. Կազմակերպության խորհրդի և գործադիր մարմնի անդամների վարձատրության քաղաքականությունը

Մասնակիցը պետք է հնարավորություն ունենա կարծիք հայտնել խորհրդի և գործադիր մարմնի վարձատրության վերաբերյալ, այդ թվում՝ ընդհանուր ժողովում քվեարկության միջոցով:

Հայտարարագրում

	Դրույթ	Համապատասխանության կարգավիճակը			Բացատրություն
1.3.1.	Մասնակիցը կարծիք է հայտնում խորհրդի և գործադիր մարմնի վարձատրության վերաբերյալ, այդ թվում՝ ընդհանուր ժողովում քվեարկելով:	Հ ա մ ա պ ա տ ա ս խ ա ն ո ւ մ է			Ընկերության ղեկավար պաշտոնատար անձանց վարձատրության պայմանների որոշումը հանդիսանում է ընդհանուր ժողովի (միակ մասնակցի) բացառիկ իրավասությունը: Տնօրենների խորհուրդը վերահսկում է գործադիր մարմնի վարձատրությունը և ընդհանուր ժողովին է ներկայացնում խորհրդի անդամների վարձատրության վերաբերյալ առաջարկություններ, որոնք վերջնական հաստատվում են մասնակցի կողմից: Վարձատրությունը Տնօրենների խորհրդի կատարվում է հասարակական հիմունքներով:

ՍԿԶԲՈՒՆՔ 1.4. Շահաբաժին ստանալու մասնակցի իրավունքը

Կազմակերպությունը միևնույն տեսակի (դասի) բաժնեդրմաների սեփականատերերի համար պետք է ապահովի հավասար և արդար վերաբերմունք մասնակցելու կազմակերպության շահույթի բաշխմանը շահաբաժին ստանալու միջոցով:

Հայտարարագրում

#	Դրույթ	Համապատասխանության կարգավիճակը			Բացատրություն
I.4.1.	Շահաբաժինների վճարման ընթացակարգերը ապահովում են հավասար վերաբերմունք միևնույն տեսակի (դասի) բաժնետոմսերի սեփականատերերի նկատմամբ:	Համապատասխանում է			Ընկերությունն ունի մեկ մասնակից՝ ԱՏՁՄ ՀԿ (100%): 2025 թ. աուդիտավորված ֆինանսական հաշվետվությունում ներկայացված է 39,481 հազ. դրամ հայտարարված շահաբաժին: Մեկ մասնակցի կառուցվածքում նույն դասի մասնակիցների միջև տարբերակված վերաբերմունք չկա:

ՍԿԶԲՈՒՆՔ I.5. Նշանակալից բաժնետիրոջ պարտականությունները

Կազմակերպությունն ի շահ նշանակալից մասնակիցների կամ անմիջականորեն նշանակալից մասնակիցների կողմից կատարվող չարաշահումներից պետք է պաշտպանի փոքր բաժնեմասնակցություն ունեցող մասնակիցներին:

Հայտարարագրում

#	Դրույթ	Համապատասխանության կարգավիճակը			Բացատրություն
I.5.1.	Կազմակերպության նշանակալից մասնակիցը բացահայտում է կազմակերպության հետ կնքվող գործարքներում կամ կազմակերպության վրա ուղղակիորեն ազդող հարցերում իր ուղղակի, անուղղակի կամ երրորդ անձանց անունից հանդես գալու իր հնարավոր էական շահը և չի մասնակցում տվյալ գործարքի կամ հարցի հետ կապված որոշման ընդունմանը:	Համապատասխանում է			Ընկերության 100% բաժնեմասը պատկանում է մեկ մասնակցի՝ հասարակական կազմակերպությանը: Ընկերության աուդիտավորված ֆինանսական հաշվետվություններում կապակցված կողմերի հետ գործարքները և էական շահերը բացահայտվում են օրենսդրությամբ սահմանված պահանջների համաձայն:
I.5.2.	Կազմակերպության նշանակալից մասնակիցը բացահայտում է խորհրդի և գործադիր մարմնի անդամների հետ իր ունեցած փոխկապակցվածությունը:	Համապատասխանում է			Ընկերության միակ մասնակից հանդիսացող հասարակական կազմակերպությունը լիարժեք բացահայտում է խորհրդի և գործադիր մարմնի անդամների հետ իր ունեցած ցանկացած փոխկապակցվածություն: Կառավարման մարմինների ձևավորման և ընտրության ժամանակ գործում են փոխկապակցվածության բացահայտման և շահերի բախման բացառման մեխանիզմներ:

Գլուխ II. Խորհուրդ

ՍԿԶԲՈՒՆՔ II.1. Խորհրդի առանցքային գործառնությունները

Կազմակերպությունը պետք է առաջնորդվի արդյունավետ և կառուցողական խորհրդի կողմից, որի դերն է նպաստել կազմակերպության երկարաժամկետ հաջողությանը, մասնակիցների համար արժեքի ստեղծմանը և կազմակերպության շահակիցներին աջակցմանը:

Հայտարարագրում

#	Դրույթ	Համապատասխանության կարգավիճակը			Բացատրություն
II.2.1.	Խորհուրդն իրականացնում է կազմակերպության ռազմավարական առաջնորդումն ու գործադիր մարմնի վերահսկումը:		Համապատասխանում է մասամբ		09.12.2025 թ. որոշմամբ ստեղծվել է Տնօրենների խորհուրդ՝ որպես կազմակերպության ռազմավարական կառավարման իրականացնող կոլեգիալ կառավարման մարմին: Կանոնադրության 2025 թ. փոփոխությամբ սահմանվել են խորհրդի լիազորությունները: Քանի որ խորհուրդը գործել է միայն հաշվետու տարվա վերջին հատվածում, 2025 թ. համար նշվում է մասնակի համապատասխանություն:

ՍԿԶԲՈՒՆՔ II.3. Խորհրդի ոչ գործադիր անդամները

Խորհրդի ոչ գործադիր անդամները պետք է իրենց կառուցողական վարքագծով խնդիրներ առաջադրեն գործադիր մարմնին, ուղղորդեն կազմակերպության ռազմավարական զարգացումը, գործադիր մարմնին առաջարկեն իրենց խորհրդարարական աջակցությունը:

Հայտարարագրում

#	Դրույթ	Համապատասխանության կարգավիճակը			Բացատրություն
II.3.1.	Խորհրդի ոչ գործադիր անդամները խորհրդում մեծամասնություն են կազմում:	Համապատասխանում է			

II.3.2.	Խորհրդի ոչ գործադիր անդամները խորհուրդ են բերում նոր փորձառություն, հատկապես՝ կազմակերպության մարտահրավերներն ընկալելու, ռազմավարական զարգացմանն աջակցելու, գործադիր մարմնին վերահսկելու և կատարողականը գնահատելու, տեղեկատվության արժանահավատության, ներքին հսկողության համակարգի, ռիսկերի կառավարման հուսալիության, ֆինանսական և ոչ ֆինանսական հաշվետվությունների արժանահավատության, խորհրդի և գործադիր մարմնի սերնդափոխության (իրավահաջորդության) պլանավորման, գնահատման ու վարձատրության քաղաքականությունների ու համակարգերի ձևավորման հարցերում:	Համապատասխանում է			Խորհրդի կառուցվածքն ու գործառնությունները նախատեսում են ոչ գործադիր անդամների առանցքային դերակատարում կազմակերպության ռազմավարական առաջնորդման, ներքին հսկողության համակարգերի վերահսկման, գործադիր մարմնի գնահատման և սերնդափոխության պլանավորման գործընթացներում:
---------	---	-------------------	--	--	---

ՍԿԶԲՈՒՆՔ II.5. Խորհրդի նախագահը

Խորհուրդը ղեկավարում է նախագահը, ով պատասխանատու է խորհրդի արդյունավետ գործունեության համար: Նախագահը պետք է ունենա անկախ և անաչառ դատողություն, խթանի խորհրդի և կազմակերպության գործունեության թափանցիկությունն ու խորհրդում քաջալերի բանավեճի մշակույթը:

Նախագահը պետք է նպաստի խորհրդի գործադիր և ոչ գործադիր անդամների միջև կառուցողական հարաբերությունների ձևավորմանը և ապահովի, որ խորհրդի ոչ գործադիր անդամները տեղեկացված որոշումներ կայացնելու համար ժամանակին ստանան ճշգրիտ ու էական տեղեկատվություն:

Հայտարարագրում

#	Դրույթ	Համապատասխանության կարգավիճակ			Բացատրություն
II.5.1.	Խորհրդի նախագահն ապահովում է օրենսդրությամբ իրեն վերապահված իրավասությունների իրականացումը:		Համապատասխանում է մասամբ		Խորհրդի նախագահի պաշտոնը և դրա հետ կապված կազմակերպչական ու վերահսկողական լիազորություններն (նիստերի ղեկավարում, պայմանագրերի կնքում) ամրագրված են կառավարման կանոններով: Քանի որ Խորհուրդը ստեղծվել է հաշվետու տարվա վերջում, այս գործառնություններն իրականացվել են մասամբ:
II.5.2.	Խորհրդի նախագահը խորհրդի ոչ գործադիր անդամ է:	Համապատասխանում է			

ՍԿԶԲՈՒՆՔ II.7. Խորհրդի անդամների պարտականությունները

Խորհրդի անդամները պետք է գործեն լիարժեք տեղեկացված, բարեխղճորեն, պարզաճ ջանասիրությամբ և ողջամտորեն՝ ելնելով կազմակերպության ու մասնակիցների լավագույն շահերից և հաշվի առնելով կազմակերպության շահակիցների շահերը:

Հայտարարագրում

II.7.1.	Խորհրդի անդամը գործում է օրենսդրությամբ և կազմակերպության ներքին իրավական ակտերով սահմանված իր իրավասությունների շրջանակում:	Հա մա պա տա սխ ան ում է			
II.7.2.	Խորհրդի անդամը որոշումներ կայացնելիս կիրառում է անկախ դատողություն:	Հա մա պա տա սխ ան ում է			Ընկերության կառավարման կանոններով խստիվ արգելվում է Խորհրդի անդամի կողմից ձայնի իրավունքի փոխանցումն այլ անձի, ինչը երաշխավորում է անդամների անկախ դատողության և անհատական որոշումների կայացման պարտադիր պայմանը:
II.7.3.	Խորհրդի անդամը երրորդ անձանցից չի ընդունում այնպիսի օգուտներ, որոնք կարող են դիտարկվել որպես ոչ ողջամիտ և հանգեցնել կազմակերպության կամ դրա հետ փոխկապակցված անձանց հետ շահերի բախման:	Հա մա պա տա սխ ան ում է			Խորհրդի անդամների համար գործում են բարեխղճության և շահերի բախման կանխարգելման կանոններ, որոնք բացառում են երրորդ անձանցից չհիմնավորված օգուտների ընդունումը: Խորհրդի անդամներն առաջնորդվում են բացառապես Ընկերության լավագույն շահերով:
II.7.4.	Խորհրդի անդամը հայտնում է կազմակերպության կողմից կնքվող գործարքում կամ ձեռքբերվող պայմանավորվածություններում անձնական ուղղակի կամ անուղղակի շահագրգռվածություն ունենալու վերաբերյալ և ներկա չի գտնվում գործարքը կնքելու մասին որոշման քննարկմանն ու քվեարկությանը:	Հա մա պա տա սխ ան ում է			2025 թ. կանոնադրության փոփոխությունում նախատեսված են Խորհրդի անդամի ձայնի իրավունքի սահմանափակման հիմքեր շահագրգռվածության/շահերի բախման իրավիճակներում:
II.7.5.	Խորհրդի անդամը բավարար ժամանակ և ջանքեր է գործադրում իր պարտականությունները պատշաճ կատարելու համար:	Հա մա պա տա սխ ան ում է			

II.7.6.	Խորհրդի անդամն իր պարտականությունները կատարում է անձամբ:	Համապատասխանում է			Խորհրդի անդամներն իրենց լիազորություններն իրականացնում են բացառապես անձամբ: Ձայնի իրավունքի կամ պարտականությունների փոխանցումը այլ անձի, ներառյալ խորհրդի այլ անդամին, խստիվ արգելված է:
---------	--	-------------------	--	--	--

ՍԿԶԲՈՒՆՔ II.8. Խորհրդի էթիկական հանձնառությունը

Խորհուրդը պետք է հետևի բարձր էթիկական չափորոշիչների:

Հայտարարագրում

#	Դրույթ	Համապատասխանության կարգավիճակը			Բացատրություն
II.8.1.	Խորհուրդը հաստատել է կազմակերպության կորպորատիվ վարքականոնները:			Չի համապատասխանում	Թեև Ընկերությունն առաջնորդվում է բարձր էթիկական չափանիշներով, առանձնացված կորպորատիվ վարքականոնների փաստաթուղթ (Code of Conduct) հաշվետու տարում Ընկերության կողմից դեռևս պաշտոնապես հաստատված չէ:

ՍԿԶԲՈՒՆՔ II.9. Տեղեկատվություն և մասնագիտական խորհրդատվություն ստանալու խորհրդի անդամների իրավունքները

Իր պարտականությունները պատշաճ կատարելու համար խորհրդի անդամը պետք է հասանելիություն ունենա և համոզված լինի, որ ստանում է արդիական, հավաստի և համապատասխան տեղեկատվություն: Անհրաժեշտության դեպքում նա պետք է հնարավորություն ունենա կազմակերպության միջոցների հաշվին ներգրավել արտաքին անկախ խորհրդատվություն:

Հայտարարագրում

#	Դրույթ	Համապատասխանության կարգավիճակը			Բացատրություն
II.9.1.	Խորհրդի անդամները պատշաճ ծանուցվում են նիստերի իրավիճակի վերաբերյալ, ողջամիտ ժամկետներում ստանում են նիստի օրակարգում քննարկվելիք փաստաթղթերն ու տեղեկությունները:	Համապատասխանում է			Խորհրդի անդամները նիստի, օրակարգի և կից նյութերի մասին ծանուցվում են նիստից առնվազն երեք օր (հրատապ հարցերի դեպքում՝ մեկ օր) առաջ, ինչն ապահովում է նյութերին պատշաճ ծանոթանալու հնարավորությունը:
II.9.2.	Խորհրդի անդամները հասանելիություն ունեն կազմակերպության կորպորատիվ քարտուղարի գործառնություններն իրականացնող անձին:	Համապատասխանում է			Ընկերությունում առկա են խորհրդի նիստերի արձանագրման և վարչական աջակցության հստակ ընթացակարգեր: Նիստերի փաստաթղթաշրջանառության ապահովման համար խորհրդի անդամներն անկաշկանդ հասանելիություն ունեն կազմակերպչական և քարտուղարական աջակցությունն իրականացնող անձանց:

ՍԿԶԲՈՒՆՔ II.10. Խորհրդի գնահատումը

Խորհուրդը կանոնավոր հիմունքներով պետք է գնահատի իր կատարողականը և որոշի իր անդամների փորձառության ու կարողությունների համադրության պատշաճությունը:

Հայտարարագրում

#	Դրույթ	Համապատասխանության կարգավիճակը			Բացատրություն
II.10.1.	Խորհուրդն ապահովում է իր ինքնագնահատումը որպես մեկ ամբողջություն:	Համապատասխանում է			

ՍԿԶԲՈՒՆՔ II.12. Խորհրդի անդամների առաջադրումը

Խորհրդի անդամների առաջադրման և ընտրության գործընթացները պետք է լինեն թափանցիկ ու կանոնակարգված: Խորհրդի անդամների ընտրությունը պետք է հիմնվի օբյեկտիվ չափանիշների վրա:

Հայտարարագրում

#	Դրույթ	Համապատասխանության կարգավիճակը			Բացատրություն
II.12.1.	Կազմակերպությունն ունի խորհրդի անդամների առաջադրման և ընտրության փաստաթղթավորված ընթացակարգեր և ապահովում է դրանց հասանելիությունը մասնակիցներին:	Համապատասխանում է			Կանոնադրության 2025 թ. փոփոխությամբ ամրագրվել է խորհրդի ձևավորման և անդամների ընտրության/նշանակման մեխանիզմը, իսկ 09.12.2025 թ. ընդհանուր ժողովով հաստատվել է առաջին կազմը:
II.12.2.	Խորհրդի կազմը պարբերաբար թարմացվում է՝ երաշխավորելու, որ խորհրդի կարողությունները բավարար են գործարար մարտահրավերներին դիմակայելու համար:	Համապատասխանում է			Խորհուրդը ստեղծվել է նոր և հաստատվել է երեք տարի ժամկետով:
II.12.3.	Խորհրդի գործող անդամն առաջադրված թեկնածուների ցանկում գտնվելու (վերընտրվելու) դեպքում խորհրդի կողմից ներկայացվում է պատշաճ հիմնավորում:		Համապատասխանում է մասամբ		Անվանակարգման և ընտրության գործընթացները ենթադրում են թեկնածուների գնահատում և հիմնավորված առաջադրում: Քանի որ խորհուրդն ընտրվել է առաջին անգամ, վերընտրման պարագայում լրացուցիչ հիմնավորումների ներկայացման պրակտիկան դեռևս չի կիրառվել:

Գլուխ III. Ներքին հսկողության և ռիսկերի կառավարման համակարգ

ՍԿԶԲՈՒՆՔ III.1. Ներքին հսկողություն

Կազմակերպությունը պետք է ունենա ներքին հսկողության արդյունավետ գործընթացներ ու ընթացակարգեր՝ կազմակերպության կողմից ֆինանսական, ոչ ֆինանսական և հաշվապահական տեղեկատվության ամբողջականությունն ապահովելու, հաշվետվողականությունը խթանելու և խարդախությունները կանխելու համար:

Հայտարարագրում

#	Դրույթ	Համապատասխանության կարգավիճակը			Բացատրություն
III.1.1.	Կազմակերպության ներքին հսկողության շրջանակները սահմանված են (առկա են բյուջետավորման, ֆինանսական սահմանափակումների, կրկնակի ստուգումների գործող կառուցակարգեր, գործարար գործընթացների կառավարումը և հետագծելիությունն ապահովող ընթացակարգեր, հաշվետվողականության և հաղորդակցման կառուցակարգեր, հստակեցված է կառավարման մարմինների, ստորաբաժանումների իրավասությունների շրջանակը, աշխատակիցներն ընկալում են ռիսկերի, այդ թվում՝ համապատասխանության ռիսկի իրավասու լինելը և այլն):	Հ	ա	մ	Աուդիտավորված ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են ՖՀՄՍ-ով, արտաքին աուդիտն անդրադառնում է ֆինանսական հաշվետվողականության համար անհրաժեշտ ներքին հսկողությանը, իսկ 2025 թ. կանոնադրությամբ հստակեցվել են կառավարման մարմինների լիազորությունները:
III.1.2	Կազմակերպության գործադիր մարմինն ապահովում է ներքին հսկողության արդյունավետ համակարգի ձևավորումն ու պահպանումը սահմանված շրջանակներում:	Հ	ա	մ	2025 թ. աուդիտորի եզրակացությամբ ղեկավարությունը պատասխանատու է այնպիսի ներքին հսկողության համար, որն անհրաժեշտ է էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

ՍԿԶԲՈՒՆՔ III.4. Կազմակերպության ներքին աուդիտը

Կազմակերպությունը պետք է ունենա ներքին աուդիտոր/ներքին աուդիտի ստորաբաժանում, որն անկախ և օբյեկտիվ հավաստիացումներ ու խորհուրդներ է տրամադրում կազմակերպության խորհրդին և գործադիր մարմնին կազմակերպության ներքին հսկողության և ռիսկերի կառավարման, կորպորատիվ կառավարման համակարգերի համարժեքության ու արդյունավետության վերաբերյալ և աջակցում կազմակերպության նպատակների իրագործմանն ու գործունեության բարելավմանը:

Հայտարարագրում

#	Դրույթ	Համապատասխանության կարգավիճակը			Բացատրություն
III.4.1.	Ներքին աուդիտորը նշանակվել է խորհրդի կողմից և հաշվետու է վերջինիս:		Համապատասխանում է մասամբ		Ընկերության ներքին աուդիտորի նշանակումը, լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, ինչպես նաև վարձատրության պայմանների սահմանումը հանդիսանում են բացառապես Տնօրենների խորհրդի իրավասությունը: Քանի որ խորհուրդը ստեղծվել է միայն 2025 թվականի վերջում, տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար ներքին աուդիտոր նշանակված չէ:
III.4.2.	Խորհուրդը հաստատել է ներքին աուդիտի տարեկան ծրագիրը:			Չի համապատասխանում	Թեև ներքին աուդիտորի տարեկան աշխատանքային ծրագրի հաստատումն իրավաբանորեն վերապահված է Տնօրենների խորհրդին, քանի որ խորհուրդը ստեղծվել է միայն 2025 թվականի վերջում, տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար ներքին աուդիտի ծրագիր դեռևս հաստատված չէ:

Գլուխ IV. Տեղեկատվության բացահայտում և թափանցիկություն

ՍԿԶԲՈՒՆՔ IV.1. Կազմակերպության տեղեկատվական քաղաքականությունը

Կազմակերպությունը պետք է ապահովի իր թափանցիկությունը, այդ թվում՝ իր ֆինանսական վիճակի, գործունեության արդյունքների, կայունության, սեփականության և կորպորատիվ կառավարման բոլոր էական հարցերի վերաբերյալ արդիական և արժանահավատ տեղեկատվության ժամանակին բացահայտումը:

Հայտարարագրում

#	Դրույթ	Համապատասխանության կարգավիճակը			Բացատրություն
IV.1.1.	Կազմակերպության տեղեկատվության բացահայտման եղանակները մասնակիցների և այլ շահակիցների համար ապահովում են համապատասխան տեղեկատվության հավասար, ժամանակին և տնտեսապես արդյունավետ հասանելիություն:	Հ ամ ա պ ա տ աս խ ան ու մ է			https://uate.org/uite-expo/
IV.1.2.	Տեղեկատվության պարբերական բացահայտումները ուղեկցվում են կազմակերպության էական զարգացումների վերաբերյալ տեղեկատվության բացահայտմամբ:	Հ ամ ա պ ա տ աս խ ան ու մ է			
IV.1.3.	Կազմակերպությունը երաշխավորում է գաղտնի, ներքին տեղեկությունների պահպանումը և իր տեղեկատվական անվտանգությունը:	Հ ամ ա պ ա տ աս խ ան ու մ է			Ընկերության մասնակիցներն ու աշխատակիցները պարտավոր են պահպանել Ընկերության գործունեության վերաբերյալ գաղտնիք կազմող տեղեկատվությունը և չհրապարակել ներքին տվյալներ, ինչն ամրագրված է ներքին կանոնակարգերով:

ՍԿԶԲՈՒՆՔ IV.2. Կազմակերպության հաշվետվությունները

Կազմակերպության կողմից էական հարցերի վերաբերյալ տեղեկատվության բացահայտումը պետք է ներառի, սակայն չսահմանափակվի տարեկան հաշվետվությունների հրապարակմամբ:

Հայտարարագրում

#	Դրույթ	Համապատասխանության կարգավիճակը			Բացատրություն
IV.2.1.	Կազմակերպության տարեկան հաշվետվությունը ներառում է խորհրդի նախագահի և գործադիր մարմնի ղեկավարի ուղերձները:	Համապատասխանում է			
IV.2.2.	Կազմակերպության տարեկան հաշվետվությունը ներառում է գործադիր մարմնի զեկույցը:	Համապատասխանում է			
IV.2.3.	Կազմակերպության տարեկան հաշվետվությունը ներառում է ֆինանսական հաշվետվությունները և դրանց վերաբերյալ աուդիտորական կազմակերպության եզրակացությունը:	Համապատասխանում է			2025 թ. «Յու Այ Թի Ի Էքսպո» ՍՊԸ-ի ֆինանսական հաշվետվությունները և Մուտ Հայաստան ՍՊԸ-ի անկախ աուդիտորի եզրակացությունը առկա են:
IV.2.4.	Կազմակերպության տարեկան հաշվետվությունը ներառում է փոխկապակցված կողմերի հետ գործարքների մասին տեղեկատվությունը:	Համապատասխանում է			«Յու Այ Թի Ի Էքսպո» ՍՊԸ-ի 2025 թ. աուդիտավորված ֆինանսական հաշվետվության 21-րդ ծանոթագրությունում բացահայտված են կապակցված կողմերի գործարքներն ու մնացորդները, այդ թվում՝ 47,837 հազ. դրամ տրված փոխառությունների մնացորդը:

IV.2.5.	Կազմակերպության տարեկան հաշվետվությունը ներառում է իրական շահառուների մասին տեղեկատվությունը:	Հա մա պա տա սխ ան ում է			Ընկերության 100% բաժնեմասը պատկանում է հասարակական կազմակերպությանը: Հաշվի առնելով կառույցի բնույթը՝ պետական ռեգիստրում և պաշտոնական հաշվետվություններում ապահովվում է իրական շահառուների վերաբերյալ օրենսդրությամբ պահանջվող տեղեկատվության ամբողջական բացահայտումը:
IV.2.6.	Կազմակերպության տարեկան հաշվետվությունը ներառում է կազմակերպության վարչակազմակերպական կառուցվածքը:		Հա մա պա տա սխ ան ում է մա սա մբ		Ընկերության կազմակերպական և հաստիքային կառուցվածքի հաստատումը Խորհրդի իրավասությունն է: Թեև ներքին կառուցվածքը սահմանված է, տարեկան պաշտոնական հրապարակումներում և զեկույցներում դրա հանրային ամբողջական բացահայտումը դեռևս լիարժեք ներկայացված չէ:
IV.2.7.	Կազմակերպության տարեկան հաշվետվությունը ներառում է խորհրդի անդամների և գործադիր մարմնի հակիրճ կենսագրությունը:		Հա մա պա տա սխ ան ում է մա սա մբ		Կառավարման մարմինների անդամների և գործադիր ղեկավարի կենսագրական տվյալների պաշտոնական հրապարակումը տարեկան հաշվետվության կամ համացանցային կայքի շրջանակներում դեռևս չի իրականացվել:
IV.2.8.	Կազմակերպության տարեկան հաշվետվությունը ներառում է կորպորատիվ կառավարման տարեկան հայտարարագիրը:			Չի համապատասխանում	Ընկերությունը հայտարարագրի ներկայացման պարտավորություն է ստացել միայն 2025 թվականի վերջին:

ՍԿԶԲՈՒՆՔ IV.3. Կազմակերպության արտաքին աուդիտորը

Կազմակերպությունը պետք է ենթարկվի արտաքին աուդիտի անկախ, կոմպերենս և որակավորված աուդիտորական կազմակերպության կողմից՝ աուդիտի, էթիկայի և անկախության միջազգային չափորոշիչներին համապատասխան՝ խորհրդին ու մասնակիցներին ողջամիտ հավաստիացում տրամադրելու այն մասին, որ կազմակերպության ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով, արժանահավատորեն արտացոլում են դրա ֆինանսական վիճակը, գործունեության ֆինանսական արդյունքները և պարտաստվել են ֆինանսական հաշվետվությունների կիրառելի հիմունքներին համապատասխան:

Հայտարարագրում

#	Դրույթ	Համապատասխանության կարգավիճակը			Բացատրություն
IV.3.1.	Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունները ենթարկվում են արտաքին աուդիտի:	Համապատասխանում է			2025 թ. ֆինանսական հաշվետվությունները աուդիտի է ենթարկել Մուռ Հայաստանը՝ Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Աուդիտորի եզրակացությունը թվագրված է 30.04.2026թ.:
IV.3.2.	Աուդիտորական կազմակերպության թեկնածությունն առաջադրում է խորհուրդը, նշանակում է (հաստատում է) ընդհանուր ժողովը:	Համապատասխանում է			Արտաքին աուդիտորի հաստատումը և աուդիտի իրականացման որոշման ընդունումը պատշաճ կերպով վերապահված են ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը: Միևնույն ժամանակ, Տնօրենների խորհուրդը սահմանում է աուդիտորի վարձատրության չափը:
IV.3.3.	Արտաքին աուդիտորը հաշվետու է մասնակիցներին:	Համապատասխանում է			Յու Այ Թի Ի Էքսպո ՍՊԸ-ի անկախ աուդիտորի եզրակացությունը հասցեագրված է Ընկերության մասնակցին/բաժնետիրոջը, իսկ աուդիտորը անկախության մասին հայտարարում է միջազգային էթիկական պահանջներին համապատասխան:

«ՅՈՒ ԱՅ ԹԻ Ի ԷՔՍՊՈ» ՍՊԸ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԵՎ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ

2025 թվականի տարեկան հաշվետվություն

Հարգելի՛ գործընկերներ, ներդրողներ և շահագրգիռ կողմեր,


2025 թվականը «ՅՈՒ ԱՅ ԹԻ Ի ԷՔՍՊՈ» ՍՊԸ-ի համար եղել է վերափոխման և ֆինանսական կայունության ամրապնդման կարևոր ժամանակաշրջան: Ընկերությունը շարունակել է գործունեությունը տեխնոլոգիական միջոցառումների կազմակերպման, խորհրդատվական և հաղորդակցական ծառայությունների զարգացման ուղղություններով՝ պահպանելով DigiTec-ը որպես առանցքային նախագիծ:

Հաշվետու տարվա արդյունքները ցույց են տվել ինչպես զարգացման ներուժը, այնպես էլ ֆինանսական և իրացվելիության կառավարման անհրաժեշտությունը: Մեր առաջիկա առաջնահերթություններն են ֆինանսական կայունության ամրապնդումը, եկամուտների աղբյուրների դիվերսիֆիկացումը, DigiTec-ի վաճառքների զարգացումը և նոր ծառայությունների ձևավորումը:


Մենք կարևորում ենք նաև կորպորատիվ կառավարման, ռիսկերի կառավարման, թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքների շարունակական զարգացումը: Մեր նպատակը ֆինանսապես ավելի ամուր, արդյունավետ կառավարվող և շուկայի փոփոխություններին արագ արձագանքող ընկերություն կառուցելն է:

Շնորհակալություն ենք հայտնում մեր մասնակցին, գործընկերներին, աշխատակիցներին, հաճախորդներին և բոլոր շահագրգիռ կողմերին՝ վստահության և համագործակցության համար:

Խորհրդի նախագահ
Ալեքսանդր Եսայան



Գործադիր մարմնի ղեկավար
Խաչատուր Հակոբյան



ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՁԵԿՈՒՅՑ

Հաշվետու ժամանակահատված՝ 01.01.2025–31.12.2025

1. Ընդհանուր տեղեկություններ

«ՅՈՒ ԱՅ ԹԻ Ի ԷԲՄՊՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ «Ընկերություն») գրանցվել է 2005 թվականի հունիսի 6-ին և գործունեություն է իրականացնում ցուցահանդեսների ու միջոցառումների կազմակերպման ոլորտում: Ընկերության գործունեությունը ներկայացված է ի վերջիններիս, խորհրդատվության և հաղորդակցության ուղղություններով:

Ընկերության միակ մասնակիցը «Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» ՀԿ-ն է, որին պատկանում է Ընկերության կանոնադրական կապիտալի 100%-ը:

2. 2025 թվականի կատարողականի ամփոփում

Ցուցանիշ	2025 թ.	2024 թ.	Փոփոխության բնույթ
Հասույթ	9,990 հազ. դրամ	6,847 հազ. դրամ	Աճ՝ մոտ 45.9%
Համախառն շահույթ	4,001 հազ. դրամ	4,939 հազ. դրամ	Նվազում՝ մոտ 19.0%
Վարչական ծախսեր	20,302 հազ. դրամ	2,115 հազ. դրամ	Էական աճ
Գործառնական արդյունք	-16,301 հազ. դրամ	2,824 հազ. դրամ	Շահույթից՝ վնաս
Ֆինանսական եկամուտ/(ծախս)	-21,515 հազ. դրամ	-3,664 հազ. դրամ	Ֆինանսական բեռի աճ
Զուտ շահույթ/(վնաս)	-37,816 հազ. դրամ	840 հազ. դրամ	Տարին ավարտվել է վնասով
Ընդամենը ակտիվներ	49,100 հազ. դրամ	89,736 հազ. դրամ	Նվազում՝ մոտ 45.3%
Ընդամենը սեփական կապիտալ	-37,766 հազ. դրամ	39,532 հազ. դրամ	Բացասական սեփական կապիտալ
Ընդամենը պարտավորություններ	86,866 հազ. դրամ	50,204 հազ. դրամ	Աճ՝ մոտ 73.0%
Ընթացիկ իրացվելիության գործակից	0.01	0.02	Շատ ցածր մակարդակ
Տարվա վերջի դրամական միջոցներ	145 հազ. դրամ	132 հազ. դրամ	Էական փոփոխություն չկա

2025 թվականին Ընկերության հասույթը աճել է, սակայն համախառն շահույթի նվազումը, վարչական և ֆինանսական ծախսերի էական աճը հանգեցրել են 37.816 մլն դրամ զուտ վնասի: Տարվա վերջում Ընկերությունն ունեցել է բացասական սեփական կապիտալ և բարձր կարճաժամկետ պարտավորություններ, ինչը վկայում է ֆինանսական կայունության և իրացվելիության նկատմամբ բարձր ուշադրության անհրաժեշտության մասին:

3. Դրամական հոսքեր և ֆինանսական դիրք

Ցուցանիշ	2025 թ., հազ. դրամ
Գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսք	-46,728
Ներդրումային գործունեությունից զուտ դրամական հոսք	-327,907
Ֆինանսական գործունեությունից զուտ դրամական հոսք	374,648
Դրամական միջոցների մնացորդ՝ տարվա վերջում	145

Բացասական գործառնական և ներդրումային հոսքերը 2025 թվականին հիմնականում փոխհատուցվել են ֆինանսական գործունեությունից մուտքերով: Այս կառուցվածքը մեծացնում է ֆինանսավորման

«ՅՈՒ ԱՅ ԹԻ Ի ԷՔՍՊՈՒՆ» ՍՊԸ

շարունակականության, պարտքի սպասարկման և կանխատեսելի դրամական հոսքերի ապահովման նշանակությունը:

4. Հիմնական ռիսկերի վերլուծություն և կառավարման եղանակներ

Ռիսկ	Բովանդակություն	Կառավարման մոտեցում
Իրացվելիության ռիսկ	Ազատ դրամական միջոցների անբավարարությունը կարող է սահմանափակել ընթացիկ և կարճաժամկետ պարտավորությունների ժամանակին կատարումը:	Կանխատեսված և փաստացի դրամական հոսքերի շարունակական մոնիթորինգ, ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների համապատասխանեցում, պարտավորությունների վերաֆինանսավորում:
Վարկային/դեֆոլտի ռիսկ	Պարտավորությունների ոչ պատշաճ կամ ոչ ժամանակին կատարելու ռիսկ, որը ուժեղանում է բարձր ֆինանսական բեռի պայմաններում:	Պարտքային բեռի կառուցվածքի օպտիմալացում, վճարունակության պլանավորում և պարտավորությունների ժամկետների վերահսկում:
Ֆինանսական բեռի / լներիջի ռիսկ	Պարտատոմսերի և այլ ֆինանսավորման սպասարկումը պահանջում է կայուն դրամական հոսքեր և կարող է ավելացնել տոկոսային ծախսերը:	Երկարաժամկետ ֆինանսավորման ներգրավում, գործող պարտավորությունների վերաֆինանսավորում, եկամտաբեր ուղղություններում ներդրումներ և եկամուտների դիվերսիֆիկացում:
Տոկոսադրույքի ռիսկ	Շուկայական տոկոսադրույքների փոփոխությունները կարող են ազդել ֆինանսավորման արժեքի և ֆինանսական արդյունքների վրա:	Գործող վարկի և պարտատոմսերի համար ֆիքսված տոկոսադրույքների կիրառում և հետագայում ֆիքսված տոկոսադրույքով գործիքներին նախապատվություն:
Արտարժույթային ռիսկ	SS շուկայի եկամուտների արտարժույթային բնույթը կարող է անուղղակիորեն ազդել DigiTec-ի մասնակիցների ակտիվության վրա, իսկ արտարժույթային պարտավորությունները՝ ծախսերի վրա:	Եկամուտների և ծախսերի հիմնականում ՀՀ դրամով ձևավորում, նոր արտարժույթային պարտավորություններից խուսափում, դրամով պարտատոմսերի թողարկում:
Օրենսդրական և կարգավորող ռիսկ	Օրենսդրության փոփոխությունները կարող են ազդել ԸՆկերության գործունեության, ֆինանսավորման և տեխնոլոգիական շուկայի վրա:	Կարգավորող փոփոխությունների մշտադիտարկում և գործունեության/պայմանագրերի համապատասխանեցում նոր պահանջներին:
Մրցակցային և շուկայական ռիսկ	SS ոլորտի և միջոցառումների շուկայի փոփոխությունները կարող են նվազեցնել մասնակիցների թիվը և պահանջարկը:	Վաճառքի ալիքների զարգացում, ծառայությունների ընդլայնում և եկամուտների աղբյուրների դիվերսիֆիկացում:
Գործառնական ռիսկ	Մատակարարների կողմից պարտավորությունների ոչ պատշաճ կատարումը կարող է առաջացնել ժամկետների խախտում, լրացուցիչ ծախսեր և հեղինակության վնաս:	Գործընկերների պայմանագրային պարտավորությունների կատարման վերահսկում և մատակարարների աշխատանքի մշտադիտարկում:
Սոցիալական / մարդկային կապիտալի ռիսկ	Որպես կազմակերպության գործունեությանը սպառնացող հնարավոր ռիսկ դիտարկվում է ոլորտում առկա աշխատուժի պակասությունը, ինչպես նաև բարձրակարգ մասնագետների ներգրավման և պահպանման դժվարությունը, ինչը կարող է սահմանափակել ընկերության աճի տեմպերը և նախագծերի ժամանակին իրականացումը:	Համակարգված HR քաղաքականության իրականացում, առանցքային հաստիքների փոխարինելիության ապահովում, աշխատակիցների շարունակական ուսուցում և մասնագիտական զարգացում, մրցունակ պայմանների ու պահպանման մեխանիզմների կիրառում, ինչպես նաև կադրերի ներգրավման աղբյուրների դիվերսիֆիկացում:
Բնապահպանական ռիսկ	Շրջակա միջավայրի օրենսդրության հնարավոր փոփոխությունները կարող են ապագայում էական պարտավորություններ առաջացնել:	Ուշադրության կենտրոնում են ՀՀ օրենսդրության հնարավոր զարգացումները, նմանադրյալ նախագծերի առկայության դեպքում նախապես միջոցներ ձեռնարկելու համար:
SS ոլորտի / ԱՓ փոխակերպման ռիսկ	ԱՓ արագ զարգացումը կարող է փոխել SS ընկերությունների ներդրումային առաջնահերթությունները, մրցակցային կառուցվածքը և միջոցառումներին մասնակցության պահանջարկը:	Շուկայի միտումների մշտադիտարկում, ծառայությունների բովանդակային վերափոխում և նոր տեխնոլոգիական ուղղություններին համապատասխան առաջարկների զարգացում:


5. Գործունեության կանխատեսումներ և զարգացման ուղղություններ

- 2026–2028 թվականներին խորհրդատվական ծառայությունների փուլային զարգացում դեպի բովանդակային ծառայություններ՝ իրավաբանական, պետական աջակցության և դրամաշնորհների փաստաթղթերի պատրաստման, ռեկրուտինգի, տաղանդների տրանսֆերի, առաջխաղացման և ստարթափներին ուղղված ծառայությունների բաղադրիչներով:
- Հաղորդակցական ծառայությունների ընդլայնում՝ միջազգային առաջատար մեդիաներում մեդիաարշավների և տեխնոլոգիական առաջնորդների անձնական բրենդի ձևավորման ծառայություններով:
- DigiTec-ի վաճառքի ռազմավարության, վաճառքի թիմի և վաճառքի ալիքների ուժեղացում՝ նախագծից ստացվող եկամուտների աճի և կայունացման նպատակով:
- Պարբերական եկամուտների նոր աղբյուրների զարգացում և եկամուտների կենտրոնացման նվազեցում:
- Ֆինանսական կայունության ամրապնդում՝ գործող պարտավորությունների վերաֆինանսավորման, իրացվելիության պահուստի և երկարաժամկետ ֆինանսավորման միջոցով:

Ֆինանսավորման բաշխումը կարող է ճշգրտվել՝ շուկայական պայմաններից, բանակցությունների արդյունքներից և նախագծերի իրականացման ժամանակացույցից ելնելով՝ առանց ներգրավվող միջոցների օգտագործման ընդհանուր նպատակի էական փոփոխության:

6. Գործադիր մարմնի եզրակացություն

2025 թվականը Ընկերության համար բնութագրվել է հասույթի աճով, սակայն միաժամանակ՝ ծախսերի և ֆինանսական բեռի աճով, բացասական զուտ արդյունքով և թույլ իրացվելիությամբ: Առաջիկա ժամանակահատվածի առաջնահերթությունները պետք է լինեն դրամական հոսքերի կայունացումը, պարտքային կառուցվածքի բարելավումը, DigiTec-ի և նոր ծառայությունների եկամտաբերության աճը, ինչպես նաև ֆինանսական, գործառնական, սոցիալական և բնապահպանական ռիսկերի վերահսկման ավելի ձևականացված գործընթացների ներդրումը:

Տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար		Սեդրակ Վարդանյան
----------------------------------	---	------------------

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հաշվետու ժամանակահատված՝ 01.01.2025–31.12.2025

1. Կազմակերպության նպատակները

Ընկերության կանոնադրական նպատակը տնտեսական գործունեության միջոցով շահույթի ստացումն է, որը ծառայում է Ընկերության միակ մասնակցի՝ «Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» ՀԿ-ի կանոնադրական նպատակների իրականացմանը:

1.1. Ռազմավարական նպատակներ

Նպատակ	Բովանդակություն
Ֆինանսական կայունություն	Պարտքային բեռի օպտիմալացում, իրացվելիության բարելավում և կանխատեսելի դրամական հոսքերի ձևավորում:
DigiTec-ի զարգացում	Վաճառքների աճ, վաճառքի նոր ալիքների և գործընկերային ձևաչափերի ներդրում, մարքեթինգային ու գովազդային նախաձեռնությունների ուժեղացում:
Եկամուտների դիվերսիֆիկացում	DigiTec-ից և առանձին եկամտային աղբյուրներից կախվածության նվազեցում՝ նոր պարբերական ծառայությունների ու բիզնես մոդելների միջոցով:
Խորհրդատվական ծառայությունների զարգացում	2026–2028 թվականներին ծառայությունների փուլային զարգացում դեպի իրավաբանական, դրամաշնորհային, ռեկրուտինգային, տաղանդների տրանսֆերի, առաջխաղացման և ստարթափային ծառայություններ:
Հաղորդակցական ծառայությունների զարգացում	Միջազգային մեդիաարշավների և տեխնոլոգիական առաջնորդների անձնական բրենդի ձևավորման ծառայությունների զարգացում:
Կորպորատիվ կառավարում	Ռիսկերի կառավարման, ներքին հսկողության, թափանցիկության և տեղեկատվության բացահայտման մեխանիզմների շարունակական զարգացում:

2. Կայունության կառավարման մոտեցումը

Ընկերության կայունությունը դիտարկվում է տնտեսական, սոցիալական, բնապահպանական և կորպորատիվ կառավարման բաղադրիչների համակցությամբ:

3. Տնտեսական կայունություն

Ցուցանիշ	2025 թ. արդյունք	Կայունության գնահատական
Հասույթ	9.990 մլն դրամ	2024 թ. համեմատ աճել է, սակայն չի ապահովել ծախսերի ծածկույթը:
Չուտ արդյունք	-37.816 մլն դրամ	Բացասական արդյունք, որը պահանջում է եկամտաբերության և ծախսերի կառավարման բարելավում:
Սեփական կապիտալ	-37.766 մլն դրամ	Բացասական սեփական կապիտալ՝ ֆինանսական կայունության էական մարտահրավեր:
Ընթացիկ իրացվելիության գործակից	0.01	Շատ ցածր իրացվելիություն:
Դրամական միջոցներ՝ տարեվերջ	0.145 մլն դրամ	Պահանջվում է իրացվելիության պահուստի ուժեղացում:

«ՅՈՒ ԱՅ ԹԻ Ի ԷԲՄՈՈ» ՍՊԸ

Ֆինանսական կայունության ամրապնդման ուղղությամբ նախատեսված են վերաֆինանսավորում, DigiTec-ի վաճառքների զարգացում, այլ պարբերական եկամուտների ձևավորում և ռեզերվային միջոցների պահպանում:

4. Սոցիալական կայունություն

Ընկերության գործունեությունը տեխնոլոգիական համայնքի համար ստեղծում է մասնագիտական և հաղորդակցական հարթակներ: DigiTec-ը ներկայացված է որպես Ընկերության առանցքային նախագիծ և տեխնոլոգիական ցուցահանդես, որը ներգրավում է մեծ թվով մասնակիցների և այցելուների:

Սոցիալական ոլորտի ցուցանիշ	Բացահայտված տվյալ	Կարգավիճակ
Աշխատակիցների թիվ	2025 թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ՝ 4 աշխատակից	Բացահայտված է
Մարդկային կապիտալի հիմնական ռիսկ	Աշխատուժի պակասուրդ, բարձրակարգ մասնագետների ներգրավման և պահպանման դժվարություն	Բացահայտված է

5. Բնապահպանական կայունություն

Ընկերությունը բավարարում է շրջակա միջավայրի վերաբերյալ պետական պահանջները և տվյալ հաշվետու ամսաթվի դրությամբ շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չի գնահատել: Բնապահպանական օրենսդրության զարգացումը և մեկնաբանության փոփոխությունները կարող են ապագայում էական պարտավորություններ առաջացնել:

Ընկերությունը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ՝ ակտիվների, գործունեության ընդհատման և գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմերի նկատմամբ պարտավորությունների համար:

Բնապահպանական ցուցանիշ	2025 թ. տվյալ
Բնապահպանական տույժեր/խախտումներ	Առկա չէ
Էներգիայի սպառում	Առկա չէ
Թափոնների առաջացում/վերամշակում	Տեսակավորում

6. Կորպորատիվ կառավարման կայունություն

- 2025 թվականի դեկտեմբերի 9-ի արտահերթ ընդհանուր ժողովի արձանագրությամբ Ընկերությունը միացել է ՀՀ իրավասու պետական մարմնի կողմից հաստատված կորպորատիվ կառավարման [կանոնադրին](#):
- Ընկերությունը հայտարարել է մասնակիցների հավասար իրավունքների, խորհրդի և ղեկավարության դերակատարության, ներքին հսկողության, ռիսկերի կառավարման, տեղեկատվության բացահայտման և թափանցիկության սկզբունքների կիրառման մասին՝ իր իրավական կառուցվածքի առանձնահատկությունները հաշվի առնելով:
- Խորհրդի գործառնությունների մեջ ներառված են ֆինանսական և ոչ ֆինանսական հաշվետվողականության ամբողջականության, ներքին ու արտաքին աուդիտի անկախության, ռիսկերի կառավարման և համապատասխանության վերահսկումը:
- Խորհրդի գործառնությունների մեջ նախատեսված է նաև գործադիր մարմնի վարձատրության համապատասխանեցումը երկարաժամկետ նպատակներին, այդ թվում՝ կայունության թիրախներին:


7. 2026–2028 թվականների կայունության առաջնահերթություններ

1. Ֆինանսական կայունության վերականգնում և իրացվելիության բարելավում:
2. Եկամուտների աղբյուրների դիվերսիֆիկացում և պարբերական եկամուտների մասնաբաժնի աճ:
3. DigiTec-ի առևտրային արդյունավետության և վաճառքների աճ:
4. Մարդկային կապիտալի պահպանման և զարգացման ներքին չափելի ցուցանիշների սահմանում:
5. Բնապահպանական հիմնական չափորոշիչների՝ էներգիայի, թափոնների, միջադեպերի և համապատասխանության տարեկան հաշվառում:

«ՅՈՒ ԱՅ ԹԻ Ի ԷՔՍՊՈ» ՍՊԸ

6. Կայունության չափելի թիրախների հաստատում և դրանց կապակցում ղեկավարության գնահատման ու վարձատրության համակարգին:

Վերջին երեք կետերը ներկայացվում են որպես սույն հաշվետվության պաշտոնականացման համար առաջարկվող չափելիության ուղղություններ և պետք է հաստատվեն Ընկերության իրավասու մարմնի կողմից՝ նախքան որպես կորպորատիվ թիրախ ներկայացվելը:

Տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար		Սեդրակ Վարդանյան
-------------------------------------	---	------------------

ՇԱՅԱԳՐԳՈՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՄԲ (ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ) ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ժամանակահատված՝ 01.01.2025–31.12.2025

1. Փոխկապակցվածության կառուցվածքը

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 50,000 ՀՀ դրամ և բաժանված է մեկ բաժնեմասի: Միակ մասնակիցը «Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» ՀԿ-ն է, որին պատկանում է Ընկերության կանոնադրական կապիտալի 100%-ը:

Ընկերության խորհրդի գործառույթների մեջ ներառված է խորհրդի և գործադիր մարմնի անդամների և մասնակիցների շահերի հնարավոր բախումների, ներառյալ՝ Ընկերության ակտիվների ոչ իրավաչափ օգտագործման և շահագրգռվածության առկայությամբ գործարքների վերահսկումն ու կառավարումը:

2. 2025 թվականի փոխկապակցված գործարքների բացահայտում


Ամփոփ ֆինանսական տվյալներով 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվները / տրամադրված փոխառությունները կազմել են 47.837 մլն դրամ: 3. առկա լրացուցիչ փաստական տեղեկություններ

- 2024 թվականի աուդիտված ֆինանսական հաշվետվության կապակցված կողմերի ծանոթագրությամբ բացահայտվել են կապակցված կողմերից ստացված 69.176 մլն դրամ փոխառություններ և 69.286 մլն դրամ մարումներ, իսկ 2024 թվականի վերջի կապակցված կողմերին տրված փոխառությունների մնացորդը կազմել է 88.486 մլն դրամ:

3. Շահերի բախման վերաբերյալ հայտարարություն

Ընկերության կառավարմանը մասնակցող որևէ անձ չի հայտնել շահերի բախման մասին տեղեկատվություն:

Տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար _____ Սեդրակ Վարդանյան



ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

2025 թվականի համար

1. Ընդհանուր դրույթներ

Սույն Կորպորատիվ կառավարման տարեկան զեկույցը ներկայացնում է «ՅՈՒ ԱՅ ԹԻ Ի ԷՔՍՊՈՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ 2025 թվականի ընթացքում գործող կորպորատիվ կառավարման համակարգը, կառավարման մարմինների կառուցվածքը, սեփականության կառուցվածքը, կառավարման սկզբունքները և կորպորատիվ կառավարման հետ կապված այլ էական տեղեկատվությունը:

Ընկերությունը գրանցվել է 2005 թվականի հունիսի 6-ին և գործունեություն է իրականացնում ցուցահանդեսների ու միջոցառումների կազմակերպման ոլորտում: Ընկերության հիմնական նախագծերից է DigiTec տեխնոլոգիական ցուցահանդեսը:

2025 թվականի դեկտեմբերի 9-ի արտահերթ ընդհանուր ժողովի արձանագրությամբ Ընկերությունը միացել է Հայաստանի Հանրապետության իրավասու պետական մարմնի կողմից հաստատված Կորպորատիվ կառավարման կանոնագրքին: Ընկերությունը գործնականում կիրառում է Կանոնագրքի սկզբունքները՝ ներառյալ մասնակիցների իրավունքների ապահովումը, խորհրդի և ղեկավարության դերակատարությունը, ներքին հսկողությունը, ռիսկերի կառավարումը, տեղեկատվության բացահայտումն ու թափանցիկությունը՝ հաշվի առնելով Ընկերության կազմակերպարարական ձևն ու կառավարման առանձնահատկությունները:

2. Վարչակազմակերպական և կորպորատիվ կառուցվածքը

2025 թվականի ընթացքում Ընկերության կառավարման համակարգը ներառել է Մասնակիցների ընդհանուր ժողովը, Տնօրենների խորհուրդը և միանձնյա գործադիր մարմինը՝ տնօրենը: Կառավարման բարձրագույն մարմինը Մասնակիցների ընդհանուր ժողովն է:

Կառավարման մարմին	Կազմ / կարգավիճակ	Հիմնական գործառույթ
Մասնակիցների ընդհանուր ժողով	Միակ մասնակից՝ «ԱՏՁՄ» ՀԿ	Բարձրագույն կառավարման մարմին. որոշումներ է ընդունում Ընկերության հիմնարար, ռազմավարական, հաշվետվողականության, աուդիտի և ղեկավարների նշանակման հարցերով:
Տնօրենների խորհուրդ	3 անդամ՝ ներառյալ Խորհրդի նախագահը	Իրականացնում է ռազմավարական կառավարում և գործունեության ընդհանուր ղեկավարում, վերահսկում է ռիսկերը, ներքին հսկողությունը, ֆինանսական ու ոչ ֆինանսական հաշվետվողականությունը և շահերի բախումները:
Տնօրեն	Միանձնյա գործադիր մարմին	Իրականացնում է Ընկերության ընթացիկ գործունեության կառավարումը, ներկայացնում է Ընկերությունը, կնքում է գործարքներ և տնօրինում է ֆինանսական ռեսուրսները՝ իրավասության սահմաններում:

3. Նշանակալից մասնակիցներ և իրական շահառուներ

2025 թվականի դեկտեմբերի 9-ին փոփոխված կանոնադրության համաձայն՝ Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 50,000 ՀՀ դրամ և բաժանված է մեկ բաժնեմասի:

Մասնակից	Մասնակցության չափ	Բաժնեմասի անվանական արժեք
«Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» ՀԿ	100%	50,000 ՀՀ դրամ

Ընկերության նկատմամբ հսկողությունն իրականացվում է «Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» ՀԿ-ի կողմից:

4. Տնօրենների խորհուրդ

4.1. Խորհրդի կազմը և անդամների հակիրճ տվյալները

Անուն, ազգանուն	Խորհրդում պաշտոն	Փորձառություն	Ներկա/այլ գործունեություն
Ալեքսանդր Հովհիկ Եսայան	Խորհրդի նախագահ	16 տարի	«ԱՏՁՄ» ՀԿ խորհրդի նախագահ
Սարգիս Համլետի Կարապետյան	Խորհրդի անդամ	15 տարի	՝ «ԱՏՁՄ» ՀԿ գործադիր տնօրեն
Կարեն Սուրենի Վարդանյան	Խորհրդի անդամ	21 տարի	«Ֆորմուլա Վենչուր» ՍՊԸ / Formula VC՝ համահիմնադիր և գլխավոր գործընկեր

4.2. Խորհրդի անդամների տարեկան անհատական վարձատրությունը

Խորհրդի անդամներն իրենց լիազորություններն իրականացնում են հասարակական հիմունքներով:

5. Գործադիր մարմնի տարեկան վարձատրությունը

Ընկերության ընթացիկ գործունեության կառավարումն իրականացնում է միանձնյա գործադիր մարմինը՝ տնօրենը:

2025 թ. գործադիր մարմնի ղեկավար	Տարեկան վարձատրություն
Խաչատուր Հակոբյան	2 մլն ՀՀ դրամ

6. Խորհրդի և գործադիր մարմնի անդամների սեփականությունը Ընկերությունում

«ՅՈՒ ԱՅ ԹԻ Ի ԷՔՍՊՈ» ՍՊԸ-ն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն է և բաժնետոմսեր չի թողարկում: Կանոնադրական կապիտալը բաժանված է մեկ բաժնեմասի, որի 100%-ը պատկանում է «Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» ՀԿ-ին: Խորհրդի և գործադիր մարմնի անդամները Ընկերության կանոնադրական կապիտալում անմիջական բաժնեմաս չունեն:

7. Աուդիտորական կազմակերպությունը, վարձատրությունը և անկախությունը

Ընկերության 2024-2025 թվականների ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրել է «Մուռ Հայաստան» ՍՊԸ-ն (Moore Armenia):

Խորհրդի կորպորատիվ կառավարման գործառույթների մեջ ներառված է արտաքին աուդիտի անկախության նկատմամբ վերահսկողությունը:

8. Ընկերության կողմից թողարկված և տեղաբաշխված բաժնետոմսերով ամրագրվող իրավունքները

Սույն պահանջը Ընկերության նկատմամբ բաժնետոմսերի մասով կիրառելի չէ, քանի որ Ընկերությունը բաժնետիրական ընկերություն չէ և բաժնետոմսեր չի թողարկում: Ընկերության կանոնադրական կապիտալը բաժանված է մեկ բաժնեմասի՝ 50,000 ՀՀ դրամ անվանական արժեքով, որը ամբողջությամբ պատկանում է միակ մասնակցին: Մասնակցի իրավունքներն իրականացվում են Ընկերության կանոնադրությամբ և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

9. Կորպորատիվ կառավարման տարեկան հայտարարագիրը

«ՅՈՒ ԱՅ ԹԻ Ի ԷՔՍՊՈ» ՍՊԸ-ն հայտարարում է, որ 2025 թվականի դեկտեմբերի 9-ին միացել է Հայաստանի Հանրապետության իրավասու պետական մարմնի կողմից հաստատված Կորպորատիվ կառավարման կանոնագրքին:

Ընկերության կորպորատիվ կառավարման համակարգը կառուցված է արդյունավետ կառավարման միջավայրի, մասնակցի իրավունքների պաշտպանության, Խորհրդի և գործադիր մարմնի դերերի տարանջատման, ներքին հսկողության և ռիսկերի կառավարման, շահերի բախման վերահսկման, ինչպես նաև տեղեկատվության բացահայտման ու թափանցիկության սկզբունքների վրա:

Կանոնագրքի առանձին դրույթների կիրառման ծավալը պայմանավորված է Ընկերության՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կազմակերպարավական ձևով, մեկ մասնակցի սեփականության կառուցվածքով և գործունեության ծավալով:

10. Խորհրդի հայեցողությամբ այլ տեղեկատվություն

2025 թվականը Ընկերության համար կորպորատիվ կառավարման համակարգի ինստիտուցիոնալացման կարևոր փուլ է եղել: Կորպորատիվ կառավարման կանոնագրքին միանալը հիմք է ստեղծել կառավարման գործընթացների հետագա համակարգման, ռիսկերի կառավարման, վերահսկողության և տարեկան հաշվետվողականության խորացման համար: